ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

«29 » մայիսի 2026թ.

ՀՀ/Ելից 72/ 166-26

«ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ին

(ՀՀ, ք. Վաղարշապատ, 67շ., 19 բն,

ՀՎՀՀ՝ 05032652

էլ. հասցե՝ b2gllc.am@gmail.com)

Ծանուցում

պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

2026 թվականի մարտի 31-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և **«ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ** -ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքվել է **ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/19-7 ծածկագրով պայմանագիրը:**

«ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ -ն 2026 թվականի մայիսի 22-ի գրությամբ հրաժարվել է 16-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարումից՝ խախտելով պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը միակողմանի լուծում է Պայմանագիրը **100008 (մեկ հարյուր հազար ութ) ՀՀ դրամ** գումարի չափով՝ հետևյալ չափաբաժինների մասով՝

ՉՀ	Անվանում	Քանակ	Արժեք
16	Սանդուղք ծալվող եռանկյունաձև	20 հատ	100008

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու

մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ОХРАНА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ РА
ENVIRONMENTAL PROTECTION AND GARDENING
ՀՊՏ 09/19226

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

Կատարող՝ Ն. Ավագյան
Հեռ.՝ 011-514-745